

## ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶԻՈՒՄ

Բնագիտական եզրերի հայերէն համարժեքների  
գործածութեան անհրաժեշտութեան մասին

Հայ գիտնականները բոլոր ժամանակներում էլ զնահատելի ներդրում են ունեցել բնագիտութեան զարգացման զանազան բնագաւառներում: Միանգամայն հասկանալի պատճառներով՝ մինչև հայոց պետականութեան վերածնունդը, հայազգի բնագէտների աշխատութիւնների մեծ մասն ստեղծուել է օտար լեզուներով: Հայ իրականութեան մէջ, բնականաբար, լուրջ ուշադրութիւն չի դարձուել գիտական եզրերի հայերէն համարժեքների գործածութեան կամ դրանց ստեղծման հարցին: Թէեւ անցեալ դարերում արժանայիշատակ Մխիթարեան միաբանները մեծ աշխատանք են կատարել այս բնագաւառում, սակայն նորայայտ եզրերը միայն մասամբ են արմատաւորուել հայոց լեզուում: Անգամ հայերէն այն բառերը, որոնք ճշգրտօրէն համապատասխանում էին օտար եզրերին, յաճախ դուրս են մնացել հայերէնի գործածութեան ոլորտից:

Խորհրդային իշխանութեան տարիներին, յայտնի պատճառներով, արեւելահայերէնի գիտական եզրաբանութիւնը ոչ միայն առաջընթաց չարձանագրեց այս հարցում, այլեւ՝ հիմնականում նպաստեց օտար եզրերի ներմուծմանը: Այսպէս կոչուած՝ տերմինաբանական կոմիտէն, որի անուանումն իսկ հայերէն չէ, զբաղուել էր հիմնականում օտար եզրերի ներմուծմամբ եւ դրանք հայոց լեզուում գործածութեան մէջ դնելու խնդրով: Արդիւնքում՝ ժամանակակից արեւելահայերէնը մոռացութեան է մատնել հարիւրաւոր գիտական և մասնագիտական եզրեր, որոնք ոչ միայն համարժեք են օտար եզրերին և համապատասխանում են իրերի ու երեւոյթների բուն էութեանը, այլեւ՝ շատ աւելի հասկանալի ու դիւրամբռնելի են իւրաքանչիւր հայի համար: Աւա՛ղ, սխալներն արդէն թոյլ են տրուած: Արդ՝ պետական ու

պաշտօնական փաստաթղթերում, մամուլում ու հեռուստատեսութեամբ, գիտական աշխատութիւններում ու դասագրքերում անարգել ու անկաշկանդ օգտագործւում են օտար եզրերը: Համաձայնուենք, որ հայերէնի՝ Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուի համար, այս երեւոյթն անյարիր է եւ անպատուաբեր: Այս առումով՝ Հայաստանի Հանրապետութեան Լեզուի պետական վարչութիւնը կարեւոր առաքելութիւն ունի:

Օտար եզրերի արմատաւորումը ժամանակակից արեւելահայերէնում զգալի չափով կապուած է դպրոցի կամ բարձրագոյն ուսումնական հաստատութեան հայերէն մասնագիտական դասագրքերի լեզուական մաքրութեան խնդրի հետ, որն անշուշտ պատշաճ մակարդակի վրայ չէ այսօր:

Ի տարբերութիւն արեւելահայերէնի՝ ժամանակակից արեւմտահայերէնը երբեք չգնաց օտար եզրերի անմիջական ներմուծման ճանապարհով, այլ ձգտեց հնարաւորին չափ անաղարտ պահել մայրենին: Բնականաբար, սփիւռքի պայմաններում ոչ բոլոր նորակերտ եզրերը դիմացան ժամանակի փորձութեանը:

Այսուամենայնիւ ջանքերն այդ ուղղութեամբ շարունակուում են: 90-ական թթ. սկսեալ սփիւռքում գործում է Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդը, որի քարտուղարութիւնը գտնուում է Ֆրանսիայում: Խորհուրդը պարբերաբար լոյս է ընծայում իր «Ուղեցոյցը», ուր տեղ են գտնում տարբեր բնագաւառների վերաբերուող մասնագիտական բառացանկեր: Բառացանկերն առաջարկում են նորակերտ եզրեր, որոնք մինչեւ այժմ չեն եղել անգլերէն, Ֆրանսերէն կամ գերմաներէն-հայերէն երկլեզու բառարաններում: Ճիշտ է՝ ոչ բոլոր օտար եզրերի համար առաջարկուած նորակերտ հայերէն համարժէքներն են, որ լիարժէք համապատասխանում են օտար եզրերին, բայց մեծ մասամբ դրանք կարող են յաջողութեամբ գործածուել հայոց լեզուում: Անշուշտ՝ այս նախաձեռնութիւնն աւելի արդիւնաւէտ կը լինէր, եթէ աւելի մեծ թուով հայագգի մասնագէտներ բոլոր բնագաւառներից ընդգրկուէին այս հայրենանուէր աշխատանքում:

Արդիական կեանքը բոլոր բնագաւառներում օտար լեզուներով անընդհատ ստեղծում է նոր եզրեր, հասկացութիւններ կամ անուանումներ: Արդեօ՞ք պէտք է անկաշկանդ պատճէնել դրանք: Մեր սերունդն այսօր պէտք է հնարաւորին չափ մաքրի հայերէնը օտար բառերի անհարկի պատճէնման ախտից: Վաղը ուշ կը լինի այդ անելու համար եւ նոյնիսկ՝ անհնարին: Այժմ հազիւ թէ յաջողուի Ֆակուլտետ

օտար բառը հայերէն համարժէքով փոխարինել եւ մաքրել ազգային բաճրագոյն ուսումնական հաստատութիւնների ցուցանակներն այդ օտարահունչ բառից: Այն արդէն հիմնաւոր տեղ է զբաղեցնում ժամանակակից արեւելահայերէնում: Պատկերացնենք, թէ ինչպիսին կը լինէր մեր լեզուն ներկայիս, եթէ այն ժամանակին չհամալրուէր այնպիսի հայահունչ բառերով, ինչպիսիք են՝ հրթիռ, գնացք, օդանաւ եւ այլն: Սրանով հանդերձ՝ ոչ ոք չի կարող բացառել օտար եզրերի ներթափանցումը հայերէնի մէջ: Միաժամանակ՝ դա ամենեւին չի նշանակում, որ լեզուի մաքրութեան խնդիրն, օտար եզրերը գործածելու առումով, կարելի է թողնել բախտի քմահաճոյքին: Ժամանակակից հայերէնը պէտք է ձերբազատուի առնուազն այն օտար եզրերից, որոնց հայերէն համարժէքներն արդէն կան բառարաններում, իսկ նորակերտ եզրերի որոնումը պէտք է դառնայ յարատեւ աշխատանք: Դա ամէն հայախօս հայի պարտքն է, եթէ նա սիրում ու գնահատում է իր մայրենի լեզուն: Դա նաեւ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների պարտականութիւնն է:

Ե՛ւ հայրենիքում, ե՛ւ սփիւռքում այսօր զգացւում է հայերէն եզրերի նոր, միասնական (դասական) ուղղագրութեամբ գրուած, նաեւ բազմալեզու (ուսերէն, անգլերէն եւ այլն) համընդհանուր եւ մասնագիտական բառարանների կարիքը: Վաղուց ժամանակն է միաւորելու համար բոլոր ջանքերն այս ուղղութեամբ՝ այդ գործում ընդգրկելով շահախնդիր հայ մասնագէտների բոլոր բնագաւառներից:

Սոյն յօդուածում ներկայացուած են որոշ բնագիտական եզրերի հայերէն համարժէքները՝ նպատակ ունենալով ի յայտ բերել դրանց գործածութեան հնարաւորութիւնը ժամանակակից հայերէնում:

Նախ՝ անդրադառնանք նիւթերի, մասնաւորապէս՝ բնական տարրերի, հայերէն անուանումների խնդրին, ապա՝ նաեւ բնագիտական այլ եզրերի:

## 1. Բնական տարրերի հայերէն անուանումների մասին

Բնական տարրերի հայերէն մոռացուած անուանումներ

Բնական տարրերի՝ քիմիական էլեմէնտների մասին հասկացողութիւնը կարեւորագոյն նշանակութիւն ունի բնագիտութեան համար: Այն կազմում է նիւթական աշխարհի ըմբռնման հիմնաքարերից մէկը: Բնական տարրերը քիմիայի ուսումնասիրութեան աւարկան են և բնագիտութեան այս բնագաւառի հայերէն անուանումը՝ տարրաբա-

նութիւն կամ տարրագիտութիւն, ճիշտ է բնորոշում նրա ուսումնասիրութեան առարկան նաեւ արդիական գիտական պատկերացումների տեսանկիւնից: Յաւօք, տարրաբանութիւն անուանումը ներկայումս պահպանուել է միայն արեւմտահայերէնում եւ դուրս է մղուել արեւելահայերէնից:

Գիտութեանը յայտնի բնական տարրերի թիւը վերջին տեղեկութիւնների համաձայն 118 է: Բնութեան մէջ ազատ վիճակում գտնուող որոշ բնական տարրեր՝ ոսկին, երկաթը, ածխածինը, պղինձը, արծաթը, մարդկութեանը յայտնի էին դեռ եւս հազարամեակներ առաջ: Արդ՝ շատ գիտնականներ կարծում են, որ ոսկին մարդկութեանը յայտնի հնագոյն մետաղն է բնական տարրերի մէջ: Տեղեկութիւններ կան, որ մօտ 4100-3900 թուականներին՝ մ.թ.ա., հին եգիպտացիները ոսկի էին ստանում եւ օգտագործում զանազան նպատակներով:

Հայերը, լինելով աշխարհի հնագոյն ժողովուրդներից մէկը, ոչ միայն քաջատեղեակ էին բազմաթիւ նիւթերի և դրանց ստացման եղանակներին, այլեւ՝ յաճախ դրանց տալիս էին սեփական՝ հայերէն անուանումներ, օրինակ՝ երկաթ: Միջնադարում նոյնպէս նորայայտ նիւթերն ստանում էին հայերէն անուանումներ, օրինակ՝ ծծումբ, նոյնիսկ, յայտնի են՝ հայբորակ (նատրիումի կարբոնատ), հայկաւ (հայական կաւ) եւ այլն: Յաւօք, աւելի ուշ, գիտութեան բուռն զարգացման շրջանում և ընդհուպ մինչեւ մեր օրերը, նորայայտ նիւթերն, այդ թւում՝ բնական տարրերը, ոչ միայն հայկական անուանումներ չստացան, այլեւ մոռացութեան մատնուեցին յայտնի հայերէն անուանումները: Խորհրդային իշխանութեան տարիներին հրատարակուած բնական տարրերի պարբերական աղիւսակներից արդէն դուրս էին մղուած, օրինակ՝ ժահին, զառիկ, մանիչ, լուսածին և այլ անուանումներ: Որքան քիչ է հայկականը, այնքան՝ լաւ: Այսպիսին էր ժամանակի «յառաջադէմ» լեզուամտածողութեան եւ «գիտական տերմինաբանութեան» պահանջը:

Արդի արեւելահայերէնում գործածւում է բնական տարրերի ընդամէնը 11 հայերէն անուանում: Դրանք են՝

Պղինձ	Արծաթ	Երկաթ
Մնդիկ	Կապար	Ոսկի
Ծծումբ	Ջրածին	Թթուածին
Անագ	Ածխածին	

Ժամանակակից արեւմտահայերէն երկլեզու բառարաններում կարելի է գտնել եւս 14 այլ բնական տարրերի հայերէն անուանումներ:

նումներ.

Արզն - պլումինիում	Չառիկ - արսեն	Լուսածին - ֆոսֆոր
Լուանոսկի - պլատին	Մանիչ - եօղ	Կալաքար - կալիում
Արջնաքար - մանգան	Ժահին - բրոմ	Բնավայծքար - սիլիցիում
Բորակածին - ազոտ	Մարիր - սիբիում	Ոսկեբոր - բոր
Կապարարծաթ - մոլիբդեն	Բնակիր - կալցիում	

Բացի այս՝ երկու այլ տարրերի համար Հր. Աճառեանի «Արմատական բառարանում» կարելի է գտնել հայերէն անուանումներ՝

Մագնեզիում, որը ծագում փոքրասիական Magnesia քաղաքի անուանումից եւ որի հայերէն անուանումը կարելի է համարել ժառատ-ը,

Յինկ (գերման. zink), ըստ նոյն բառարանի ծագում է հայերէնի զանգ կամ ժանգ բառերից և համապատասխանում է հայերէնի ժանգառ-ին:

Ժառատ - մագնեզիում

Ժանգառ - ցինկ

Նատրիում բնական տարրի համար արեւմտահայերէն երկլեզու բառարաններն առաջարկում են՝ աւշնատարր, բնաբորակ, բորակ, հայբորակ, քարաղածին եւ այլն, որոնցից նախընտրելի է բնաբորակ անուանումը:

Բնաբորակ - նատրիում

Ահա բնական տարրերի այն հայերէն անուանումները, որոնք դեռեւս կարելի է փրկել մոռացութիւնից եւ մտցնել նորաստեղծ բառարանների, դասագրքերի ու ձեռնարկների մէջ: Հայերէն գրաւոր եւ բանաւոր խօսքը դրանից միայն կը շահի:

Բնական տարրերի հայերէն նորակերտ անուանումների ստեղծման հնարաւորութեան հարցի շուրջը

Բնական տարրերի մի մեծ խումբ իրենց անուանումներն ստացել են տեղանուններից, տարրը առաջին անգամ յայտնագործած գիտնականի անունից, երբեմն էլ՝ յունական կամ հռոմէա-

կան դիցաբանութեան հերոսների անուաններից: Ակնյայտ է, որ այդ անուանումները չեն կարող փոփոխութեան ենթարկուել: Հնարաւոր փոփոխութեան կարող են ենթարկուել միայն դրանց վերջածանցները, որոնք տարբերում են իրարից տարբեր օտար լեզուներում:

Օրինակ՝ ռուսերէնում, Вагaг-սն, լատիներէնում՝ Vanad-ium. Հայերէնում իբրեւ վերջածանց կարող է ծառայել -ակ, կամ՝ բարեհնչիւնութեան համար, -եակ վերջաւորութիւնը համապատասխան անուանումներում: Մովորաբար, հայերէնում այն ունի առարկաները փոքրացնող իմաստ՝ տուն-տնակ, խումբ-խմբակ եւ այլն: Համապատասխանաբար, կ'ունենանք՝ Vanadium-վանադեակ:

Բնական տարրերի անուանումների մէկ այլ խումբ են կազմում յունական, լատինական, ակելի սակաւ՝ այլ լեզուների բառարմատների հիման վրայ ստեղծուած անուանումները: Դրանցից շատերը ըստ իմաստի կարող են փոխարինուել հայերէն համապատասխան անուանումներով, որոնք մեր կարծիքով շատ ակելի դիւրամբռնելի կը լինեն հայի համար, քան՝ օտար անուանումներն են: Բնական տարրերին նորակերտ անուանումներ առաջարկելիս, մեր կարծիքով, նպատակայարմար է առաջնորդուել հետեւեալ սկզբունքներով: Նախ՝ բնական տարրերի գոյութիւն ունեցող որոշ հայերէն անուանումներում հանդիպում ենք տարրի անուանը ծին ակելացնելով կազմուած անուանումների, օրինակ՝ թթուածին, իսկ որոշ դէպքերում էլ, ակելացնելով՝ քար բառը, որը յիշեցնում է, որ տարրի անուանումը ծագել է համապատասխան հանքատեսակի անուանումից, օրինակ՝ արջնաքար: Ապա՝ արեւմտահայերէն բառարաններում կան անուանումներ, որոնք կազմուած են հետեւեալ ձեւով՝ տարրի անուանմանը ակելացուած է բնա, օրինակ՝ բնածուխ, բնակիր: Բացի այս՝ նոր անուանումները հնարաւոր է կազմել նաեւ վերոյիշեալ ակ կամ եակ վերջաւորութիւններն ակելացնելով բառի արմատին: Առաջնորդուելով նշուած սկզբունքներով՝ փորձենք կազմել որոշ տարրերի հայերէն նորակերտ անուանումներ, որոնք համարժէք են լատինական անուանումներին: Ներկայումս ակելահայերէնում ընդունուած բնական տարրերի անուանումները ստորեւ բերում են ըստ Հայկական խորհրդային հանրագիտարանի տուեալների: Դիցուք՝ օրինակներն հետեւեալներն են:

Առաջարկուող նորակերտ անուանումներ  
բնական տարրերի համար

Տարրը	Լատիներէն անուանումը	Ծագումը	Հայերէն նշանակութիւնը	Առաջարկուող անուանումը
Ակտինիում	Aktinium	լատին. aktis	ճառագայթ	Շողարձակ
Աստատին	Astatinum	հին յուն. astatos	անկայուն	Փոփոխունակ
Արգոն	Argon	հին յուն. argos	անզորժունակ	Անապակ
Բարիում	Barinum	հին յուն. barys	ծանր	Ծանրորակ
Բերիլիում	Berillium	հին յուն. beryllion	զմրուխտ	Բնազմրուխտ
Բիսմութ	Bismutum	գերման. wis եւ mat	մարգագետին +	Հովտաքար, հանք
Դիսպրոզիում	Disprosium	հին յուն. dis prosium	դժուարամատչելի	Դժուարայայտ
Իրիդիում	Iridium	հին յուն. iridis	ծիածան	Ծիածնաքար
Լանտան	Lanthanum	հին յուն. lantano	մնում եմ աննկատ	Ծպտաքար
Լիթիում	Lithium	հին յուն. lithos	քար, հանքաքար	Բնաքար
Կոբալտ	Cobaltum	անգլ. gobin	տնապայ, չար ոգի, թզուկ	Հողապարիկ
Կրիպտոն	Kryptonum	հին յուն. kryptos	ծածկուած	Ծպտունակ
Հելիում	Helium-	հին յուն. helios	արեւ, արեգակ	Արեգնածին
Նեոդիմիում	Neodymium	հին յուն. neo եւ dymium	նոր + կրկնակի	Նորակրկնակ
Նեոն	Neon	հին յուն. neos	նոր	Նորակ
Նատրիում	Natrium	արաբ. natron	բորակ	Բնաբորակ

Նիկել	Niccolum	գերման. kupfer- nickel	պղինձ-Նիկել, չար ուժի, դե, որը խոչընդո- տում էր հանքափորնե- րին պղինձ արդիւնահա- նել հանքից	Դիւաքար
Պրազեոդիմիում	Praseodimium	հին յուն. prasinos	կանաչ	կանաչաքար
Պրոտակտինիում	Protaktinium	լատին. protos և aktis	առաջին + ճառագայթ	Առաջնաչողակ
Ռուբիդիում	Rubidium	հին յուն. rubidos	կարմիր	Բնասուղակ
Սելեն	Selenium	հին յուն. selene	լուսին	Լուսնաքար
Վոլֆրամ	Wolframium	գերման. wolf եւ rahm	գայլ + լորձ	Գայլաքար
Տիտան	Titanium	հին յուն. titan	հսկայ, դիւցազուն	Դիւցազնաքար
Տեխնիցիում	Technetium	հին յուն. technetos	արհեստական	Արհեստածին
Տելուր	Tellurium	լատ. tellus	հող, գետին	Հողածին
Տալիում	Thalium	հին յուն. thallos	ընձիւղ	Ընձիւղաքար
Ռադոն	Radon	լատին. rad եւ on (վերցուած argon բառից)	ճառագայթ, շող	Շողունակ
Ռադիում	Radium	լատին. radiare	ճառագայթ	Շողակ
Ցեզիում	Caesium	լատին. caesius	կապոյտ	կապտաքար
Ցիրկոնիում	Zirconium	արաբ zircon	նոնաքար	Բնանոնաքար

Ուրան	Uranium	Հին յուն. uranus	երկինք	Բնաերկնաքար
Քլոր	Chlorum	Հին յուն. chloros	դեղնականաչ	Դալկունակ, Դալարակ
Քսենոն	Xenonum	Հին յուն. xenos	օտար	Տարատեսակ
Քրոմ	Chromium	Հին յուն. chroma	գոյն	Գունաքար
Օսմիում	Osmium	Հին յուն. osme	հոտ	Ժահրաքար
Ֆտոր	Fluorum	լատին. fluor	հոսք, տեղա- փոխութիւն	Հոսունակ

Ինդիում եւ Պոլոնիում տարրերը, որոնց անուանումները ծագում են երկրների անուններից, հայերէնում կարող են համապատասխանաբար անուանուել՝ Հնդեակ եւ Լեհեակ:

Աղիւսակում օգտագործուած յապաւումներ

լատին.– լատիներէն, գերման.– գերմաներէն, յուն.– յունարէն, արաբ.– արաբերէն, անգլ.– անգլերէն

Վերոյիշեալ անուանումներն օգտագործելու դէպքում բնական տարրերի պարբերական համակարգը հայերէնով կ'ունենայ հետեւեալ տեսքը՝

**ԲՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ**

Տարրի կարգային թիւը	ներկայիս անուանումը արեւելահայերէնում	նորակերտ անուանումներ պարունակող տարբերակ
1	Ջրածին	Ջրածին
2	Հելիում	Արեւածին
3	Լիթիում	Բնաքար
4	Բերիլիում	Բնագմբուխտ
5	Բոր	Ոսկեբոր

6	Ածխածին	Ածխածին
7	Ազոտ	Բորակածին
8	Թթուածին	Թթուածին
9	Ֆտոր	Հոսունակ
10	Նէոն	Նորակ
11	Նատրիում	Բնաբորակ
12	Մագնեզիում	Ժառատ
13	Ալիւմինիւմ	Արզն
14	Սիլիցիւմ	Բնակայծաբար
15	Ֆոսֆոր	Լուսածին
16	Մծումբ	Մծումբ
17	Բլոր	Դալարակ
18	Արգոն	Անապակ
19	Կալիւմ	Կալաքար
20	Կալցիւմ	Բնակիր
21	Սկանդիւմ	Սկանդեակ
22	Տիտան	Տիտանակ
23	Վանադիւմ	Վանադիակ
24	Բրոմ	Գունաքար
25	Մանգան	Արջնաքար
26	Երկաթ	Երկաթ
27	Կոբալտ	Դիւաքար
28	Նիկել	Նիկել
29	Պղինձ	Պղինձ
30	Ցինկ	Ժանգառ
31	Գալիւմ	Գալեակ
32	Գերմանիւմ	Գերմանեակ
33	Արսէնիւմ	Զառիկ

Տարրի կարգային թիվը	Ներկայիս անուանումը արեւելահայերէնում	նորակերտ անուանումներ պարունակող տարբերակ
34	Սելենիում	Հոսնաքար
35	Բրոմ	Ժահին
36	Կրիպտոն	Ծպտունակ
37	Ռուբիդիում	Բնասուղակ
38	Ստրոնցիում	Ստրոնցեակ
39	Իտրիում	Իտրեակ
40	Ցիրկոնիում	Բնանունաքար
41	Նիոբիում	Նիոբակ
42	Մոլիբդէն	Կապարարծաթ
43	Տելուրիում	Արհետածին
43	Ռուտենիում	Ռուտենեակ
45	Ռոհնիում	Ռոհնեակ
46	Պալադիում	Պալադեակ
47	Արծաթ	Արծաթ
48	Կադմիում	Կադմիակ
49	Ինդիում	Հնդեակ
50	Անագ	Անագ
51	Սիբիում	Ծարիր
52	Տելուր	Երկրաքար
53	Եօդ	Մանիչ
54	Քսենոն	Տարատեսակ
55	Ցեզիում	Կապտաքար
56	Բարիում	Ծանրաքար
57	Լանտան	Ծպտաքար
58	Ցերիում	Ցերեակ
59	Պրասեոդիմիում	Կանաչաքար

60	<i>Նեոդիում</i>	<i>Նորակրկնակ</i>
61	<i>Պրոմեթեում</i>	<i>Պրոմեթեակ</i>
62	<i>Սամարիում</i>	<i>Սամարեակ</i>
63	<i>Եւրոպիում</i>	<i>Եւրոպակ</i>
64	<i>Գադոլինիում</i>	<i>Գադոլինեակ</i>
65	<i>Տերբիում</i>	<i>Տերբեակ</i>
66	<i>Դիսպրոզիում</i>	<i>Դժուարայայտ</i>
67	<i>Հոֆմիում</i>	<i>Հոֆմիակ</i>
68	<i>Էրբիում</i>	<i>Էրբեակ</i>
69	<i>Տուլիում</i>	<i>Տուլեակ</i>
70	<i>Իտտրիում</i>	<i>Իտտրեակ</i>
71	<i>Լուտեցիում</i>	<i>Լուտեցեակ</i>
72	<i>Հաֆիում</i>	<i>Հաֆիակ</i>
73	<i>Տանտալ</i>	<i>Տանտալեակ</i>
74	<i>Վոլֆրամ</i>	<i>Գայլաքար</i>
75	<i>Ռենիում</i>	<i>Ռենեակ</i>
76	<i>Օսմիում</i>	<i>Ժահաքար</i>
77	<i>Իրիդիում</i>	<i>Ծիածնաքար</i>
78	<i>Պլատին</i>	<i>Լուսնոսկի</i>
79	<i>Ոսկի</i>	<i>Ոսկի</i>
80	<i>Սնդիկ</i>	<i>Սնդիկ</i>
81	<i>Տալիում</i>	<i>Ընձիւղակ</i>
82	<i>Կապար</i>	<i>Կապար</i>
83	<i>Բիսմութ</i>	<i>Հովտաքար</i>
84	<i>Պոլոնիում</i>	<i>Լեհեակ</i>
85	<i>Աստատին</i>	<i>Փոփոխունակ</i>
86	<i>Ռադոն</i>	<i>Շողոունակ</i>
87	<i>Ֆրանսիում</i>	<i>Ֆրանսեակ</i>

Տարրի կարգային թիվը	Ներկայիս անուանումը արեւելահայերէնում	Նորակերտ անուանումներ պարունակող տարբերակ
88	Ռազիում	Շողակ
89	Ակտինիում	Շողարձակ
90	Տորիում	Տորեակ
91	Պրոտակտինիում	Առաջնաշողակ
92	Ուրան	Երկնաքար
93	Նեպտունիում	Նեպտունեակ
94	Պլուտոնիում	Պլուտոնեակ
95	Ամերիկիում	Ամերիկեակ
96	Կիւրիում	Կիւրիակ
97	Բեկերելիում	Բեկերելեակ
98	Կալիֆորնիում	Կալիֆորնիակ
99	Էյնշտէյնիում	Էյնշտէյնեակ
100	Ֆերմիում	Ֆերմեակ
101	Մենդելեևիում	Մենդելեևեակ
102	Նոբելիում	Նոբելեակ
103	Լորենցիում	Լորենցեակ

Բնական տարրերի պարբերական համակարգում յաջորդ կարգային համարն ունեցող տարրերը շողարձակ (ռադիոակտիվ) նիւթեր են, որոնք ստացւում են արհեստական եղանակով եւ լայն կիրառութիւն չունեն ներկայումս: Նրանց թիւն աւելանում է, արհեստական ճանապարհներով ստեղծւում են նորերը: Նշուած տարրերի անուանումները հայերէնում առաջարկւում է կազմել վերոյիշեալ ակ կամ եակ վերջածանցն աւելացնելով լատինական անուանումների հիմքին, որոնք հիմնականում ծագում են յատուկ անուններից:

Բնական տարրերի պարբերական աղիւսակներում յաճախ նշում են նաեւ տարրերի հիմնական իմբերի անուանումները: Դրանց համար առաջարկւում են հետեւեալ անուանումները՝

արկարիական մետաղներ – կալաքարային մետաղներ  
 հողարկարիական մետաղներ – հողակալաքարային մետաղներ  
 հալոգեններ – աղածիններ  
 իներտ գազեր – անապակ գազեր  
 լանտանիդներ – ծպտաքարեր  
 ակտինիդներ – շողարձակներ:

Օգտագործուած գրական աղբիւրներ

1. Հայկական խորհրդային հանրագիտարան, հ. 1-2, 1974-86, Երեւան:
2. Словарь иностранных слов, Высшая школа, Москва, 1980
3. Հ. Աճառեան «Հայերէնի արմատական բառարան», հ. Ա-Գ, 1986, Երեւան:
4. «Ուղեցոյց» Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդի, հտ. Ա-Գ, 1993-1998, Մարտէյլ:
5. Webster's Dictionary, Massachusetts, 1980, USA.
6. Յ. Թ. Գայայեան «Բառարան գանձարան հայերէն լեզուի», Պէյրուիթ, 1994:
7. Химическая энциклопедия, изд. Энциклопедия, т. 2, Москва, 1988
8. International Union of Pure and Applied Chemistry. Commission on Atomic Weights and Isotopic Abundances. Pure and Applied Chemistry, 1988, 60, 6, 841.

Օգտագործուած են նաեւ՝ սփիւռքում տարբեր ժամանակներում լոյս տեսած մօտ երկու տասնեակի հասնող անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն-հայերէն երկլեզու բառարաններ:

ՌՌԲԵՐՏ ԲԱԽԶԱԶԵԱՆ

Les termes des sciences naturelles  
dans la langue arménienne moderne  
(Résumé)

Robert Bakhtchadjian

Un grand nombre des termes scientifiques d'origines étrangères s'emploie dans la langue arménienne moderne. Une partie de ces termes a ses équivalents exactes en arménien. Cet article a pour objectif de montrer la possibilité de remplacement de ces termes par les termes arméniens. Sur l'exemple les dénominations des éléments chimiques, la question de l'emploi de ces termes arméniens s'examine. Cependant, une nouvelle nomenclature arménienne se propose pour les éléments de la table périodique.